ՎԱՀՐԱՄ ՌԱԶՄԻԿԻ ԲԱԼԱՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 22.08.1962
Ծննդավայր՝ ԼՂ(Ա)Հ, Մարտունու շրջան, գ. Գիշի

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վահրամ Բալայանը ԼՂ(Ա)Հ Մարտունու շրջանի Գիշի գյուղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1979 թ. ընդունվել և 1983 թ. գերազանցությամբ ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը:

1983-1985 թթ. աշխատել է որպես ԼՂ(Ա)Հ Գիշու միջնակարգ դպրոցի պատմության ուսուցիչ:

1985-1988 թթ. սովորել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի ասպիրանտուրայում:

1989 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ նվիրված 1920-30-ական թթ. խորհրդային Հայաստանի պետական շինարարության հիմնահարցերին:

2004 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում:

1998-1999 թթ.՝ ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի դոկտորանտուրա:

2013 թ. պաշտպանել է «Ազատագրության և պետականության համար պայքարի պատմական և գաղափարական դրսևորումներն Արցախում (17-րդ դարի երկրորդ կես – 2007 թ.)» թեմայով դոկտորական ատենախոսություն:

2014 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում:

1989-1992 թթ. աշխատել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի բաժանմունքի պատմության ամբիոնում որպես դասախոս:

1992-2009 թթ. աշխատել է որպես ԱրՊՀ պատմության ամբիոնի վարիչ:

1996-2013 թթ. հանդիսացել է ԱրՊՀ Հայագիտական կենտրոնի հիմնադիր-ղեկավարը և ԱրՊՀ Հայագիտական հանդեսի գլխավոր խմբագիրը:

2008-2013 թթ.՝ ԱրՊՀ գիտական աշխատանքների գծով պրոռեկտոր, միաժամանակ ԱրՊՀ Գիտական տեղեկագրի խմբագիր:

2000-2005 թթ.՝ ԼՂ(Ա)Հ ԱԺ պատգամավոր, խմբակցության ղեկավար

2010-2015 թթ.՝ ԼՂ(Ա)Հ ԱԺ պատգամավոր

2015-2020 թթ.՝ ԼՂ(Ա)Հ ԱԺ պատգամավոր, ԱԺ Փոխնախագահ

2020-ից՝ ԼՂ(Ա)Հ ԱԺ պատգամավոր, Արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ:

2023-ից ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի միջին դարերի բաժնի ավագ գիտաշխատող

2024 թ.՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Արցախի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրման գիտական խմբի ղեկավար:

2013-2023 թթ. Վ.Բալայանը համատեղությամբ դասավանդել է ԱրՊՀ-ում և Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» պետհավատարմագրված համալսարանում՝ որպես Հայոց պատմության դասախոս:

Վ.Բալայանը եղել է ԼՂ(Ա)Հ վարչապետին կից գործող գիտության և առաջավոր տեխնոլոգիաների հանձնախմբի անդամ:

Վ.Բալայանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայոց Արևելից նահանգների պատմության տարաբնույթ հիմնախնդիրները:

Վ.Բալայանը 2009 թվականից մինչև 2023 թվականը հանդիսացել է Արցախի գիտական կենտրոնի ֆինանսավորմամբ իրականացվող 4 դրամաշնորհի/ գիտական թեմայի ղեկավար:

Վ.Բալայանի գիտական ղեկավարությամբ 3 ասպիրանտներ՝ Տ. Հակոբյանը, Ա.Առուստամյանը և Ն.Բաղդասարյանը հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ:

Վ.Բալայանը գիտական զեկուցումներով, դասախոսություններով և ելույթներով հանդես է եկել հանրապետական և միջազգային մի քանի տասնյակ գիտաժողովներում, կլոր սեղաններում, գիտագործնական սեմինարներում, սփյուռքահայ համայնքներում, Հայոց բանակի զորամասերում և այլն:

Վ.Բալայանը **23** մենագրությունների, ավելի քան **135** գիտական հոդվածների հեղինակ է, որից **5**-ը ընդգրկված է Scopus/Webofscience (Q 1, Q 2, 2025-2026) ՄԳՇ-ում: Գիտական ուսումնասիրությունները հրատարակվել են ԼՂ(Ա)Հ –ում, ՀՀ–ում, Ֆրանսիայում, Բելգիայում, Ճապոնիայում, ՌԴ–ում, Լիբանանում:

Վ.Բալայանը «Գիտական Արցախ» հանդեսի խմբագրական խորհրդի անդամ է, 2025 թվականից ընդգրկված է Մոսկվայի Հումանիտար պետական համալսարանի կողմից հրատարակվող «Новый исторический вестник» Scopus/Webofscience (Q 2) գիտական հանդեսի գրախոսների ցանկում:

Վ.Բալայանը «Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը» գրքի համար 2003 թ. արժանացել է Եղիշեի անվան պետական մրցանակին:

«Արցախ. Պատմության քառուղիներում» գիտահանրամատչելի փաստավավերագրական եռալեզու՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն տեսաֆիլմի համար 2009 թ. կրկին արժանացել է Եղիշեի անվան պետական մրցանակին:

«ԼՂՀ ատլաս»-ի (հայերեն, ռուսերեն անգլերեն լեզուներով) կազմման և հրատարակման գործում ունեցած ավանդի համար պարգևատրվել է Արցախի Հանրապետության «Երախտագիտություն» մեդալով:

Պարգևատրվել է «Մեսրոպ Մաշտոց» շքանշանով:

ԱՀ նախագահի 09.11.2021թ. 3445-Ա հրամանագրով Վ.Բալայանին շնորհվել է ԱՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Վ.Բալայանը ամուսնացած է, ունի 2 որդի, չորս թոռնիկ: